

մասն ուրեմն նոր եկուոր եւ օտար է, միւս մասը՝ հայ-մահմետական: Բարերդ բազմաթիւ հայ գիւղերով հայաշատ գաւառ մը մնացած է. եւ ասոր համար Երիտասարդ թուրքերու առանձինն կատաղութեան զոհ եղաւ 1915ի տարագրութեան ատեն, որոնք հոս ուրոյն կոտորած ալ կազմակերպած են<sup>1</sup>:

Ընդհակառակն Սպեր՝ թէ եւ միգաւէտ ու արօտաշատ, բաւականաչափ մշակելի հող չունի. ուստի հոս եկուոր օտար մահմետական շատ քիչ է: Հայ գիւղերը, թէ եւ թուով բաւական բազմաթիւ, յիշեալ գաղթականութեան շնորհիւ նուազ մարդաշատ են: Հայերէն ձեռագրաց քիչ հաւաքածոյ կայ, ուր չգտնուին ձեռագիրներ՝ ինչպէս Բաբերդի, նոյնպէս Սպերի բազմաթիւ եկիւղեցիներն ու վաճ.քերը գրուած: Ասոնց մեծ մասն այժմ աւերակ կամ ամայի է, եւ ուր կանգուն մնացած՝ յաճախ յարակից գիւղն արդէն մահմետականացած է: Կը բաւէ օրինակ մը: Չեռագիր Յայսմաւուրք մը, որ Սպերի Այգեձոր գիւղը կը գտնուի,

<sup>1</sup> Հմմտ The Treatment of Armenians. Documents presented etc. by Viscount Bryce. London 1916. p. 4, 13. 242 ff.